

ՄԱՅԻՍ 2023

ԱՄՍԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԲԸ



1. Շահագործման տարածաշրջանի տնօրինություններ	3
1.1. Ջրամատակարարման համակարգի կառավարում	4
1.2. Ջրաչափերի փոխարինում և տեղադրում	6
1.3. Ջրահեռացման համակարգ	7
1.4. Կեղտաջրերի մաքրում և հեռացում	8
1.5. Էներգահամակարգ	9
1.6. Մեքենա-մեխանիզմներ	9
2. Առևտրային տնօրինություն	10
2.1. Բաժանորդների տվյալներ	11
2.2. Հասույթ	11
2.3. Գանձում	12
2.4. Դեբիտորական պարտքեր /Դրավաբանական վարչություն/	13
2.5. Ջրաչափեր	14
2.6. Ապօրինի միացումների հայտնաբերում և վերացում	15
3. Տեխնիկական տնօրինություն	16
3.1. Ջրամատակարարման շարունակականություն	17
3.2. Էլեկտրաէներգիայի կառավարում	18
3.3. Աշխարհագրական տեղեկատվական համակարգ	20
3.4. Ջրատար համակարգի բարելավում	20
3.5. Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայություն	23
3.6. 1-85 թեժ գիծ	24
4. Լրատվական ծառայություն	25
5. Որակի, առողջության և անվտանգության բաժին	28
5.1. Դասընթացներ/սեմինարներ	29
5.2. Ռիսկերի հայտնաբերում/մեղմացնող միջոցառումների կիրառում	30
5.3. Համագործակցություն ՀՀ ՆԳ Նախարարության հետ	31

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ
ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԻ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ժամանակահատվածում «Հարավ» ՇՏ սպասարկման տարածքում գտնվող մի շարք քաղաքներում և գյուղերում իրականացվել են վթարադրոնտողական, ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, ջրակորուստների հայտնաբերմանն ու վերացմանն ուղղված աշխատանքներ, մասնավորապես

- «Հարավ» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Մասիսի փողոցի ջրամատակարարումը իրականացվում էր $d=200$ մմ պողպատե ջրագծով, որի $L=640$ զծ/մ հատվածը խիստ քայքայված էր, հաճախակի էին կրկնվող վթարները: Ջրագծի որոշակի հատվածում անհնարին էր դարձել վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը և ջրագծի հետագա շահագործումը:

Տեղամասի աշխատակիցների կողմից քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=225$ մմ $L=640$ զծ/մ պոլիէթիլենային խողովակներով, իրականացվել են ընդհանուր երկարությամբ $d=25$ մմ $L=100$ զծ/մ անհատական միացումներ: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, վերացել են ջրակորուստները, խնայվել է Յ/վրկ ջրաքանակ:



- «Էրեբունի» տեղամասի սպասարկման տարածում գտնվող համայնք Դիտա., Խուրշուղյան և Մուշ փողոցների $d=75$ մմ պոլիէթիլենային խողովակները զստված էին, ինչի հետևանքով առկա էր ջրակորուստ և հաճախակի էին վթարները:

Տեղամասի աշխատակիցների կողմից կառուցվել է $d=63$ մմ $L=91$ զծ/մ երկարությամբ նոր պոլիէթիլենային ջրագիծ, իրականացվել են անհատական միացումներ $d=20$ մմ պլեխ խողովակներով:



- «Կենտրոն» տեղամասի սպասարկման տարածքում գտնվող Մարի Թաղ 22 փողոցի ջրամատակարարումն իրականացվում էր $d=100$ մմ քայքայված պողպատե ջրագծով, ինչի պատճառով անհնարին էր դարձել վերջիններիս հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից $d=100$ մմ պողպատե քայքայված ջրագիծը փոխարինվել է $d=90$ մմ $L=110$ զծ/մ պոլիէթիլային խողովակներով, իրականացվել են անհատական միացումներ $d=25$ մմ $L=60$ զծ/մ ընդհանուր երկարությամբ:



- «Կենտրոն» տեղամասի աշխատակիցների կողմից կատարվել է ջրամբարների լվացում և ախտահանում «Աբովյան պուրակ», «Ծիծեռնակաբերդ», «Մարի Թաղ» և «Մարաշ» օրվա կարգավորիչ ջրամբարներում:

- «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Հալաբյան փողոցում 23 շենքի մոտ, տեղամասի աշխատակիցների կողմից փոխարինվել է $d=300$ մմ $L=5.5$ զծ/մ քայքայված մետաղական խողովակը:

Կատարված աշխատանքի արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, խնայվել է 10/վրկ ջրաքանակ:



● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող համայնք Ջովունի, 8-րդ փողոցով անցնող $d=50$ մմ ջրագծի $L=30$ զծ/մ հատվածը խիստ քայքայված էր, անհնարին էր դարձել վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը և ջրագծի հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից նշված ջրագծի հատվածը փոխարինվել է $d=63$ մմ, $L=30$ զծ/մ պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, վերացել են ջրակորուստները և կրճատվել են հաճախակի վթարների արդյունքում առաջացող շահագործման ծախսերը:



● «Մաշտոց» տեղամասի սպասարկման տարածում գտնվող համայնք Ուշի, 10-րդ փողոցով անցնող $d=50$ մմ ջրագծի $L=85$ զծ/մ հատվածը խիստ քայքայված էր, անհնարին էր դարձել ջրագծի հետագա շահագործումը: Տեղամասի աշխատակիցների կողմից նշված ջրագծի հատվածը փոխարինվել է $d=63$ մմ, $L=85$ զծ/մ պոլիէթիլենային խողովակով:



Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է խմելու ջրի որակը, վերացել են ջրակորուստները և կրճատվել են հաճախակի վթարների արդյունքում առաջացող շահագործման ծախսերը: Կատարվել են անհատական միացումները:

Արարատի մարզ

● «Արտաշատ» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են Արտակ Խաչատրյան փողոցի ջրագծի վերակառուցման աշխատանքներ (պէթ $d=20-110$ մմ $L= 1195$ զծմ), քանի որ տվյալ փողոցում գոյություն չունեին կենտրոնացված ջրամատակարարման համակարգ և վերոնշյալ փողոցի բաժանորդները ջուրը ստանում էին Մովսես Խորենացի փողոցում գործող պէթ $d=40$ մմ ջրագծից, որը կառուցված էր 2000-ական թվականներին՝ անորակ, ստանդարտին չհամապատասխանող խողովակներով: Աշխատանքների իրականացման ընթացքում տեղադրվել է թվով 16 ջարչափական դիտահոր, թվով 23 $d=15$ մմ ջրաչափ, թվով 4 ջրաչափական սարք տեղափոխվել է սահմանագատման կետ, տեղադրվել է թվով 27 $d=15$ մմ և թվով 1 $d=40$ մմ փական, շահագործումից հանվել են $d=40$ մմ $L=1195$ զծմ վթարային վիճակում գտնվող ջրագծեր:

Կատարված աշխատանքների արդյունքում բարելավվել է Արտակ Խաչատրյան փողոցի և ընդհանուր Վեդի քաղաքին մատակարարվող խմելու ջրի քանակը և որակը, ապահովվել է սպասարկվող բաժանորդների անխափան ջրամատակարարումը, վերացվել են գաղտնի վթարները և ապօրինի միացումները, տնտեսվել է մոտ 4լ/վրկ ջրաքանակ:



Գեղարքունիքի մարզ

● «Մևան» տեղամասի աշխատակիցների կողմից իրականացվել են ջրագծի վերակառուցման աշխատանքներ ք.Մևան, Հրազդան 1 հասցեում ($d=530$ մմ պողպատե խողովակի վրա զստված փականի վերանորոգում):



Վայոց ձորի մարզ

● «Վայք» և «Եղեգնաձոր» տեղամասի աշխատակիցների կողմից Եղեգիս համայնքի Շատին բնակավայրում կառուցվել է d=40մմ L=140զմմ ջրագիծ:



Մայիս ամսվա ընթացքում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգում կատարված աշխատանքները հակիրճ նկարագրվում են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1 Աշխատանքների հակիրճ նկարագիր

Կատարված աշխատանքները	Չափման միավոր	Քանակ
Չափում հոսքաչափով	տեղ	1810
Որոնում խողովակափնտրիչ սարքով	մ	46275
Հոսակորուստի որոնում ակվաֆոնով	մ	45240
Հոսակորուստի որոնում կորեյաստորով	մ	14180
Ջրաչափական հանգույցներ ուսումնասիրություն, սխեմաների կազմում	հատ	44
Շահագործումից հանված ջրագիծ	մ	3429
Կառուցված ջրագիծ	մ	7897.2
Կառուցված կոյուղագիծ	մ	824
Վերացված գաղտնի վթարներ	հատ	13
Փոխարինված փական	հատ	95
Տեղափոխված/փոխարինված ջրաչափական հանգույց	հատ	409
Մաքրված դիտահոր	հատ	1385
Գաղտնի վթարների վերացման արդյունքում տնտեսված ջրաքանակ	լ/վ	16.3
Վերացված վթարներ	Չափման միավոր	Քանակ
Ջրամատակարարման ցանցում	հատ	955
Ջրահեռացման ցանցում	հատ	1344
Պոմպակայաններում	հատ	0
Մաքրված անձրևընդունիչ	հատ	0

Մայիս ամսվա ընթացքում վերացված վթարների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև բերված Աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2. Վերացված վթարների քանակային նկարագիր

	Պոլիէթիլենային խողովակներ (հատ)	Մետաղական խողովակներ (հատ)	Ցանցում շահագործման և պահպանման աշխատանքներ
Ընդամենը	921	907	961

1.2. ՋՐԱՉԱՓԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՈՒՄ ԵՎ ՏԵՂԱՓՈԽՄ

Ստորև Աղյուսակ 3-ում ներկայացված է մայիս ամսվա ընթացքում տեղադրված, փոխարինված կամ սահմանազատման կետեր տեղափոխված տարբեր տրամաչափերի ջրաչափերի քանակը:

Աղյուսակ 3. Տեղադրված, փոխարինված, տեղափոխված ջրաչափեր

Կատարված աշխատանքներ	Ջրաչափի տրամագիծ, մմ										Ընդամենը
	15	20	25	30	32	40	50	65	80	100	
Տեղադրված	276	6	2	1	0	0	0	0	0	0	285
Փոխարինված	251	27	7	3	1	3	3	0	0	0	295
Տեղափոխված	0	0	0	0	0	0	0	0	0	0	0
Տեխ. ակտ	353	12	3	0	0	2	1	0	0	0	371
Ընդամենը	880	45	12	4	1	5	4	0	0	0	951

Ընդհանուր առմամբ տեղադրվել, փոխարինվել կամ սահմանազատման կետեր են տեղափոխվել 15-100 մմ տրամաչափի 951 ջրաչափ: Կատարված աշխատանքների 93%-ը վերաբերել է 15 մմ ջրաչափերին:

1.3. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

● «Շահումյան» տեղամասի սպասարկման տարածում գտնվող Շերամ փողոցի 41, 43, 47 շենքերի ջրահեռացումն իրականացվում էր $d=250$ մմ կերամիկական կոյուղագծով, որի $L=12$ գծ/մ հատվածը ժառանգված էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Կոյուղագծի որոշակի հատվածում անհնարին էր դարձել խցանման բացման աշխատանքների իրականացումը և հետագա շահագործումը:

Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է $d=250$ մմ $L=12$ գծ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով, իրականացվել են Շերամի փողոցի 41, 43, 47 շենքերի $d=250$ մմ կոյուղագծի մաքրման և պրոֆիլակտիկ լվացման աշխատանքներ: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ շենքերի ջրահեռացման համակարգի աշխատանքը կայունացել է:



● Հաղթանակ 9 փողոցի ջրահեռացումն իրականացվում էր $d=200$ մմ կերամիկական կոյուղագծով, որի $L=24$ գծ/մ հատվածը ժառանգված էր, հաճախակի էին կրկնվող խցանումները:

Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է $d=200$ մմ $L=24$ գծ/մ երկշերտ ծալքավոր պոլիէթիլենային խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ հատվածում ջրահեռացման համակարգը գործում է անխափան:



● Շահումյան 2 փողոցի ջրահեռացումն իրականացվում էր $d=200$ մմ թուջեկոյուղագծով, որի $L=12$ գծ/մ հատվածը ժառանգված էր, հաճախակի էին կրկնվող խցանումները: Տեղամասի աշխատակիցների կողմից վթարված հատվածը փոխարինվել է $d=200$ մմ $L=12$ գծ/մ պոլիէթիլենային ծալքավոր խողովակով: Կատարված աշխատանքների արդյունքում վերոնշյալ հատվածում ջրահեռացման համակարգի աշխատանքը կարգավորվել է:

Գեղարքունիքի մարզ

● «Սևան» տեղամասի աշխատակիցների կողմից ք.Սևան, Հրազդան 1 հասցեում իրականացվել են $d=1000$ մմ երկաթբետոնե կոյուղու կոլեկտորի վրա ժառանգված դիտահորերի ծածկերի ($d=560$, $2200*2200$ մմ) փոխարինման, մակերեսի բետոնացման աշխատանքներ:



Մայիս ամսվա ընթացքում ջրահեռացման ցանցում կատարված աշխատանքների հակիրճ նկարագիրը ներկայացվում է ստորև Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
1	Արաբկիր	0	279	18
2	Քանաքեռ-Զեյթուն	0	245	0
3	Մաշտոց	300	260	0
4	Շահումյան	390	189	51
5	Շիրակ	717	422	6
6	Արթիկ	0	94	0
7	Ապարան	0	54	0
8	Ալավերդի	1820	26	102
9	Աշոցք	365	10	32
10	Բերդ	400	15	84

h/h	Տեղամասի անվանումը	Կոյուղագծերի լվացում	Կոյուղագծերում առաջացած խցանումների բացում տեղ	Կոյուղագծերի կառուցում կամ վերակառուցում գծ/մ
11	Իջևան	0	53	143
12	Լոռի	0	210	6
13	Նոյեմբերյան	0	17	0
14	Սպիտակ	0	22	0
15	Ստեփանավան	1175	0	0
16	Թալին	0	9	0
17	Տաշիր	0	6	0
18	Չարենցավան	0	85	0
19	Աբովյան	0	120	7
20	Հրազդան	0	100	126
21	Կենտրոն	150	249	6
22	Հյուսիս	0	270	132
23	Էրեբունի	300	153	12
24	Հարավ	0	288	6
25	Արմավիր	0	110	0
26	Արտաշատ	0	98	18
27	Էջմիածին	0	120	0
28	Աշտարակ	1868	25	0
29	Արարատ	0	62	6
30	Մասիս	0	50	2
31	Գավառ	0	32	0
32	Սևան	0	63	3
33	Մարտունի	0	24	0
34	Վարդենիս	0	11	0
35	Ճամբարակ	0	9	0
36	Դիլիջան	0	45	63
37	Վայք	0	18	0
38	Եղեգնաձոր	0	19	0
39	Ջերմուկ	0	45	0
40	Սիսիան	0	48	0
41	Գորիս	0	39	0
42	Կապան	0	91	899.5
43	Մեղրի	0	52	2
	Ընդամենը	7485	4137	613

1.4. ԿԵՂՏԱԶՐԵՐԻ ՄԱՔՐՈՒՄ ԵՎ ՀԵՌԱՅՈՒՄ

Ընթացիկ ամսում «Կեղտաջրերի մաքրման կայանների» ծառայության ենթակայության տակ գտնվող կեղտաջրերի մաքրման կայաններում և պոմպակայաններում կատարվել են բազմաթիվ վթարա-վերականգնողական աշխատանքներ, որոնցից առանձնացվել են հետևյալ աշխատանքները.

- Սևանի N3 կեղտաջրերի պոմպակայանում վթարվել էր ստորգետնյա եռաֆազ մալուխը, որը գննության արդյունքում հայտնաբերվեց և վերանորոգվեց իսկ պոմպերի հորի մեջ՝ մղման խողովակի վրա առաջացել էր անցք որի արդյունքում ջուրը մեծ ճնշումով մղում էր հորի մեջ: Այն եռակցման միջոցով վերանորոգվեց և այժմ պոմպակայանը աշխատում է բնականոն ընթացքով:

- Դիլիջանի կեղտաջրերի մաքրման կայանում կոլեկտորով մեծ քանակությամբ պոլիէթիլենե խողովակներով կծիկ էր լցվել, որն առաջացրել էր առվակների և ցանցերի խցանում: Արդյունքում այդ խցանումը ժամանակին հեռացվեց և որի շնորհիվ սարքավորումներն աշխատում են անխափան: Վերականգնվեց նաև ամբողջ ներքին և արտաքին լուսավորության համակարգը, որի արդյունքում փոխարինվեցին լամպեր, լուսարձակներ և ավտոմատ անջատիչներ: Ձննվեցին նաև բոլոր ռեդուկտորները և շարժիչները:

- Վարդենիսի կեղտաջրերի մաքրման կայանի օդամուղի ռոտորի ածխե թիթեղները մաշվել էին և այդ պատճառով օդ չէր մղվում դեպի սարքավորումներ: Արդյունքում դրանք փոխարինվեցին նորով և այժմ օդամուղն աշխատում է բնականոն ընթացքով:

Բոլոր ԿՄԿ-ներում և ԿՊ-ներում իրականացվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ, ստուգվել են բոլոր սարքերը (թե էլեկտրական, թե մեխանիկական), կատարվել են կարգավորումներ:



Աղյուսակ 5. Աշխատանքների հակիրճ նկարագիր

h/h	Գտնվելու վայրը	Գառույցի անվանումը	Մղված կեղտաջրերի ծավալը մ ³	Մաքրված կեղտաջրերի ծավալը մ ³	Կեղտաջրից առանձնացած կեղտ
1	ք. Գավառ	«Գավառ» ԿՄԿ	0	61,668	28,8
2	ք. Մարտունի	«Մարտունի» ԿՄԿ	0	64,565	28,8
3	ք. Վարդենիս	«Վարդենիս» ԿՄԿ	0	169,885	5,4
4	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» ԿՄԿ	0	104,610	10,8
5	ք. Դիլիջան	«Դիլիջան» ԿՄԿ	0	126,485	9,9
6	ք. Սևան	«Սևանի» N3 պ/կ	18,455	0	0
7	ք. Սևան	«Սևանի» N5 պ/կ	11,910	0	0
8	ք. Գավառ	«Գավառ» պ/կ	12,100	0	0
9	ք. Վարդենիս	«Վարդենիս» պ/կ	19,100	0	0
10	ք. Ջերմուկ	«Ջերմուկ» պ/կ	0	0	0

1.5. ԷՆԵՐԳԱՀԱՄԱԿԱՐԳ

Թվով 354 բակային պոմպակայաններում կատարվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքում թվով 222 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները:

1.6. ՄԵՔԵՆԱ-ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ

Մայիս ամսվա ընթացքում իրականացվել են մեքենամեխանիզմների վերանորոգման լայնածավալ աշխատանքներ, որոնց արդյունքում դրանք կարգաբերվել են և պատրաստ են հետագա շահագործման համար:

«Հարավ» ՇՏ կողմից շահագործվող մեքենամեխանիզմների պատշաճ շահագործման համար եռակցման աշխատանքներ են իրականացվել թվով 2 մեքենա-մեխանիզմի վրա:

Փոխարինվել են թվով 45 մեքենա-մեխանիզմի շարժիչի, փոխանցման տուփի, հիդրոհամակարգի յուղեր, արգելակման հեղուկ, քսայուղեր և գտիչներ:

Թվով 2 մեքենա-մեխանիզմի անվաղողեր նորոգվել, փոխարինվել և հավասարակշռվել են:

Թվով 2 ավտոմեքենայի մարտկոցներ փոխարինվել են նորերով:

Թվով 12 մեքենա-մեխանիզմի համար նորոգվել է և փոխարինվել են բարձր ճնշման ռետինե խողովակներ: Վերոնշյալ աշխատանքների արդյունքում հիմնականում մեքենա-մեխանիզմներն աշխատում են անխափան, որը նպաստում է ժամանակին վերացնել համակարգում առկա ջրամատակարարման և ջրահեռացման վթարները:



ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ



2.1. ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐ

Շարունակվում է բաժանորդների հետ պայմանագրերի կնքման գործընթացը: 01.06.2023թ. դրությամբ «Ինտերակտիվ» համակարգ է մուտքագրվել 601,636 պայմանագիր. Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	2023թ. Մայիս ամսին ծառայություններ ստացած բաժանորդների թիվ	Կնքված պայմանագրերի քանակը	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	669,490	573,680	86,7
	Իրավաբանական անձ	31,781	27,956	86,8

Հաշվառված բաժանորդների քանակական տվյալները հաշվետու ամսվա դրությամբ բերված են ստորև աղյուսակում.

Տնօրինություն	Սպառողներ	Բաժանորդների ընդհանուր քանակ	Ծախսող բաժանորդների քանակ	%
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	742,469	593,502	79,9
	Իրավաբանական անձ	37,129	27,042	72,8

Սպառում չունեցող (0-ական ծախսեր) բաժանորդների մասով, հնարավորության դեպքում, լրացուցիչ ստուգայցեր են իրականացվում ինչպես տեղամասերի մասնագետ-տեսուչների, այնպես էլ կենտրոնական գրասենյակի համապատասխան աշխատակիցների կողմից: Միաժամանակ համեմատական վերլուծություններ են կատարվում այլ ծառայություններ մատուցող ընկերությունների տվյալների հետ:

Առևտրային տեղամասերի սպասարկման տարածքում հաշվետու ամսում համապատասխան փաստաթղթերի հիման վրա ձևակերպվել և տվյալների բազա է մուտքագրվել թվով 453 նոր բաժանորդ:

2.2. ՀԱՍՈՒՅԹ


Շարունակվում է ջրաչափերի փոխարինման գործընթացը: Պիլոտային ծրագրերին (Շիրակ, Լոռի, Սևան և այլն) գույքահետ փոխարինվում են նաև այլ տարածքներում շարքից դուրս եկած ջրաչափերը: Նախկին ցածրորակ ջրաչափերը փոխարինվում են նոր բարձրակազ և ավելի զգայուն ջրաչափերով: Խոշոր սպառում ունեցող իրավաբանական բաժանորդների ջրաչափերը հնարավորության դեպքում միացվում են Լոկատոր համակարգին ծախսերը պարբերաբար, առանց այցելության, առցանց հսկելու նպատակով:

Իրավաբանական անձերի ջրաչափերը փոխարինվում և տեղափոխվում են բաժանորդների տարածքներից դուրս գտնվող հատուկ դիտահորեր, որը նվազեցնում կամ գրեթե բացառում է ապօրինությունների հնարավորությունը: Գրեթե ամբողջովին փոխարինվել և բաժանորդների տարածքներից դուրս են տեղափոխվել գործող բուժ. հաստատությունների, զին. մասերի, դպրոցների և մանկապարտեզների ջրաչափերը:

Փոխարինված ջրաչափերն ուղարկվում են պարտադիր լաբորատոր ստուգաչափման: Մայիս ամսվա ընթացքում ստուգաչափվել է 5393 ջրաչափ:

Տնօրինություն	Սպառողներ	Մարքին	Անսարք	Միջամտած	Ստուգաչափված ջրաչափերի քանակ առ 04.2023
Առևտրային	Բնակիչ-բաժանորդ	2276	1903	387	4566
	Իրավաբանական անձ	555	198	74	827
	Ընդամենը	2831	2101	461	5393

Ստուգաչափված ջրաչափ




Փոխարինված ջրաչափերի լաբորատոր ստուգաչափման արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա ջրաչափերի որոշ մասն ունի խնդիրներ: Օրինակ՝ մայիս ամսին փոխարինված 5393 ջրաչափերի մոտ 48 %-ը (կամ 2562 ջրաչափ) անսարք է կամ առկա է արտաքին միջամտություն:

Միջամտած ջրաչափերի մասով կազմվում են համապատասխան արձանագրություններ:

Ընթացիկ ամսում լաբորատոր ստուգաչափման արդյունքում, անսարք և միջամտած ջրաչափերից կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկվել է 296,137 մ³ հասույթ:

Ստորև՝ գրաֆիկային տեսքով, բերված են 2023թ. բաժանորդների ամսական սպառման ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատ.

Հասույթ



2.3 ԳԱՆՁՈՒՄ

Մայիս ամսին նախորդ ամսվա ձևավորված հասույթի համեմատ գանձումը կազմել է 2,400 մլն. դրամ (93 %): Նախորդ ամսվա ձևավորված հասույթի դիմաց վճարումները սահմանված ժամկետում ապահովելու նպատակով ընկերությունում կիրառվում են բաժանորդներին ուղարկվող հիշեցումների և ծանուցումների մի շարք մեթոդներ՝ SMS-հաղորդագրություն, էլեկտրոնային հաղորդագրություն, գրավոր փոստային առաքում, ծանուցումներ, հեռախոսազանգեր և այլն:

Պարբերաբար չվճարող բաժանորդներին «վճարման դաշտ» բերելու նպատակով՝ հնարավորության դեպքում իրականացվում են պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ՝ մինչև պարտքի մարումը կամ պարտքի մարման ժամանակացույցի կնքումը, սակայն, հաշվի առնելով որոշակի հանգամանքներ, հատկապես սահմանամերձ բնակավայրերում, հաշվետու ամսվա ընթացքում մեր կողմից չեն իրականացվել նաև պայմանագրով և գործող կարգով նախատեսված անհատական ջրամատակարարման դադարեցումներ:

Այս իրավիճակը, բնականաբար, իր բացասական ազդեցությունն է ունեցել գանձման բարձր, նախատեսված ցուցանիշների ապահովման գործում:

2.4 ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ / ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ/

Համեմատաբար մեծ դեբիտորական պարտքերի գանձման նպատակով Առևտրային տնօրինության աշխատակիցների կողմից շարունակվում է պարտքերի մարման ժամանակացույցերի կնքման գործընթացը: Մայիս ամսվա ընթացքում Առևտրային տնօրինության կողմից կնքվել է թվով 188 պարտքի մարման ժամանակացույց՝ մոտ 20.8 մլն դրամ ընդհանուր գումարով:

Ժամկետանց խոշոր դեբիտորական պարտք ունեցող բաժանորդների պարտքերի գանձմանն իրավական ընթացք տալու համար, առաջնահերթ նոր պայմանագրեր են կնքվում այդ բաժանորդների հետ, ճշգրտվում են դեբիտորական պարտքերի չափը, և պարտատերերի ցուցակները ներկայացվում են իրավաբանական վարչություն:


Դեբիտորական պարտքերի վերաբերյալ տվյալները բերված են ստորև ներկայացված աղյուսակում.

Տնօրինություն	Պարտքը 01.06.2023թ. դրությամբ (մլն. ՀՀ դրամ)	Այդ թվում հուլիս ամսվա հասույթ (մլն. ՀՀ դրամ)
Առևտրային, այդ թվում	10,575	2,523
Բնակիչ-բաժանորդներ	7,588	1,708
Իրավաբանական անձեր	2,987	815

Հարկ է նշել, որ մարզերի տարածաշրջանի բաժանորդների առկա պարտքերը դեռ հստակեցված չեն և առայժմ հանված չեն այլ ընկերություններ փոխանցված վճարումները, ինչպես նաև հաշվի չեն առնված բաժանորդների նախկինում ունեցած կանխավճարները: Նշված հանգամանքը բավականին դժվարեցնում է բաժանորդների հետ դեբիտորական պարտքերի ճշգրտման ու գումարների հավաքագրման գործընթացը, ինչպես նաև դատական գործընթացի արդյունավետ կազմակերպումը:

Շուրջ 329.6 մլն. ՀՀ դրամը կուտակվել է երկու բաժանորդներին մատուցված ջրամատակարարման ծառայությունների դիմաց մեծածախ սակագնով պարբերաբար չվճարելու պատճառով. Դրանք են՝ «Հաճն Ջուր» ՀՈԱԿ-ը և «ՀՀ Արարատի մարզի Ազատաշեն» համայնքը:

2023 թ. դեբիտորական պարտքերի շարժը / մլն. դրամ (Մարզեր)



2.5 ՋՐԱԶԱՓԵՐ

Բաժանորդների տվյալների բազայում 01.06.2023թ. դրությամբ հաշվառված ջրաչափով և առանց ջրաչափի (նորմատիվային եղանակով հաշվարկվող) բաժանորդների քանակական տվյալները բերված են ստորև աղյուսակում:

Տնօրինություն	Սպառողներ	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
		Ընդամենը	Այդ թվում ծախսող	%	Ընդամենը	Այդ թվում ծախսող	%
Առևտրային	Ջրաչափով	712,154	592,299	83.17	36,068	27,032	74.95
	Առանց ջրաչափի	30,315	1,203	3.97	1,061	10	0.94

Տվյալների բազայում 01.06.2023թ. դրությամբ պիտանելիության ժամկետը (12 տարին) գերազանցող ջրաչափերի քանակական տվյալները ներկայացված են աղյուսակային տեսքով:

Տնօրինություն	Բնակիչ-բաժանորդներ			Բրավարանական		
	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%	Գործող ջրաչափերի քանակը	Այդ թվում ժամկետանց	%
Առևտրային	883,740	390,674	44.21	39,810	9,215	23.15

Առաջնահերթությամբ՝ խափանված, հետո պիտանելիության ժամկետը գերազանցող ջրաչափերի տվյալները ներկայացվում են համապատասխան ստորաբաժանումներին՝ դրանց փոխարինման նպատակով:

Հաշվետու ամսվա ընթացքում տեղադրվել և փոխարինվել է (այդ թվում թաղամասային ծրագրով) 6539 ջրաչափական սարք: Այդ թվում՝ նախկինում ջրաչափական սարք չունեցող բաժանորդների մոտ տեղադրվել է 812 նոր ջրաչափ և այդ բաժանորդներին մատուցված ծառայությունների հաշվարկն այսուհետ կատարվում է նոր տեղադրված ջրաչափերի ցուցմունքների հիման վրա:

Երևանի թաղամասային ծրագրի շրջանակներում կապալառու ընկերությունների կողմից իրականացվում են գոյություն ունեցող ջրաչափերի փոխարինման աշխատանքներ ավելի բարձր դասի ջրաչափերով, ինչն էլ նպաստում է բաժանորդների միջին ծախսի ճզգրիտ հաշվառմանը:

ՊԿԱԾ տեղադրված ջրաչափեր

Հասցե	Ջրաչափերի ընդհանուր քանակ	Տեղադրված ջրաչափերի քանակ	%
գ.Քասախ	2445	2003	81.9
գ.Պոռչյան	1676	1145	66.5
ք.Հրազդան, Միկրոշրջան թաղ.	5980	1924	32.4

Տեղամասերում ընկերության տնօրինությունների ուժերով իրականացվում է բաժանորդների ջրաչափերի փոխարինման թաղամասային ծրագիր:

Ջրաչափերի փոխարինման աշխատանքներ են իրականացվել մի շարք տեղամասերի սպասարկման տարածքներում: Առկա անսարք և փոխարինման ենթակա ջրաչափերից արդեն փոխարինվել է Լոռի տեղամասի սպասարկման տարածքի տարբեր հասցեներում՝ 15049, Շիրակ տեղամասի սպասարկման տարածքում՝ 14545, Գորիս տեղամասի սպասարկման տարածքում՝ 3734, Կապան տեղամասի սպասարկման տարածքում՝ 4783, Միսիան տեղամասի սպասարկման տարածքում՝ 2473, Արարատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 3706 և Արտաշատ տեղամասի սպասարկման տարածքում՝ 6339 ջրաչափական սարք:

2.6 ԱՊՕՐԻՆԻ ՄԻԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՑՈՒՄ

Առևտրային տնօրինության տեղամասերի աշխատակիցների ամենօրյա աշխատանքի մաս են կազմում ապօրինի միացումների հայտնաբերման, արձանագրման և ապօրինությունների վերացման ուղղությամբ աշխատանքները: Կազմված արձանագրություններն «Ինտերակտիվ» համակարգ մուտքագրելուց հետո, ապօրինություն կատարած անձիք սահմանված կարգով ծանուցվում են, նրանց են ներկայացվում վերահաշվարկվող, վճարման ենթակա գումարների չափերը, իսկ տվյալ հասցեները փոխանցվում են տարածաշրջանի շահագործման տնօրինությանը՝ ջրագրկում իրականացնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում հայտնաբերված ապօրինի միացումների վերաբերյալ կազմված արձանագրությունների հիման վրա վերահաշվարկված ջրածախսերի և դրա դիմաց կատարված վճարումների տեղեկատվությունը բերված է ստորև ներկայացված աղյուսակում:

Տնօրինություն	Քանակ	Խ.մ.	Գումար (ՀՀ դրամ)
Առևտրային	476	250,807	45,712,849

Ապօրինությունների հայտնաբերման և արձանագրությունների կազմման գործառույթը, տեղամասերի առևտրային ծառայության աշխատակիցներից բացի, իրականացվում է նաև Գլխավոր տնօրինության առևտրային վերահսկողության աշխատակիցների կողմից:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՏՆՕՐԻՆՈՒԹՅՈՒՆ




3.1. ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ


Ստորև ներկայացված գրաֆիկում պատկերված Երևան քաղաքի ապրիլ ամսվա (15-ի դրությամբ) շարունակականության տվյալը կազմել է՝ 96.7%, ինչը 0.3 % նվազ է նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի ցուցանիշի համեմատ:

Շարունակում է գործել ընկերության կողմից սպասարկվող բնակավայրերի ջրամատակարարման գրաֆիկը, որը համաձայնեցվել է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ:


Ջրամատակարարման շարունակականություն Երևան



Հաշվետու ամսվա ընթացքում «Շարունակականության և մոնիթորինգի բաժնի» կողմից ՇՏ-ներում կարգաբերվել է թվով 92 ճԿՓ: Ստորև ներկայացված է կարգաբերված ճԿՓ-ների գրաֆիկներից մի քանիսը.




Երևան քաղաքը սնող Գառնի, Ապարան, Արզնի 1, Արզական, Գյումուշ 1,2 և Կաթնաղբյուրի ջրատարների ինքնահոս ջրաքանակը 2023թ-ի մայիս ամսին 2022 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 116 լ/վ-ով, իսկ Երևան քաղաքի ջրարտադրության համար հոսանքի ծախսն ավելացել է 737 հազար կՎտ-ով, ինչը երևում է ստորև ներկայացված գրաֆիկներում:



3.2. ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Հաշվետու ամսվա ընթացքում էլ. էներգիայի ծախսը Երևան քաղաքում ավելացել է 3315 կՎտ.ժ (0,73%), այն դեպքում, երբ նորակառույց շենքերի 14 պոմպակայան ավելացել է «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հաշվեկշռում՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ: Այդ 14 պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը միայն կազմում է 6079 կՎտ.ժ, իսկ առանց այդ պոմպակայանների էլ. էներգիայի ծախսը՝ ավել կլիներ 9394 կՎտ.ժ:

Երևան քաղաքի բակային պոմպեր (առանց Խարբերդի պոմպակայանի)




Երևան քաղաքի բակային պոմպեր

Հաշվետու ժամանակահատվածում գույքագրվել են 136 էլ. հաշվիչներ: Ամենօրյա կարգով ընթերցվել և հաշվետվություն է ներկայացվել ջրարտադրության խոշոր պոմպակայանների էլ. էներգիայի ծախսի վերաբերյալ: Էլեկտրաէներգետիկական մեծախախ շուկայի ԿՈՒՊ (կարգավորվող ուղիղ բաղադրիչ) և ՕԱՇ (օր առաջ շուկա) բաղադրիչներում կատարվել են առևտրային գործընթացներ, որոնց արդյունքում տնտեսվել են համապատասխանաբար 3,284,162 ՀՀ դրամ և 161,000 ՀՀ դրամ: Կատարվել է էլ. էներգիայի հաշվառում, գործարքների արդյունքում ձևավորված ակտերի ստուգում, հաստատում:

● Գյումրի քաղաքում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 7314 կՎտ.ժ 31,5%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշների համեմատ:

Շիրակ




Պոմպակայանների ուսուժանասիրություն

Թվով 39 խոշոր պոմպակայանում կատարվել են ուսուժանասիրություններ, որոնց արդյունքում 32 պոմպակայանում վերացվել են հայտնաբերված թերությունները:

Թվով 354 բակային պոմպակայանում կատարվել են ուսուժանասիրություններ, որոնց արդյունքում թվով 222 հասցեում վերացվել են հայտնաբերված թերությունները: Իրականացվել են նաև վարչական շենքերի, էլ. մագնիսական հոսքաչափերի և ՕԿՁ-ի էլ. սնուցման մալուխների և լուսավորության վերականգնման աշխատանքներ:

Ինվերտորների տեղադրում

Տեղադրված ընդհանուր 78 ինվերտորային համակարգով պոմպերի սպառած էլ. էներգիան, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ, նվազել է 4199 կՎտ.ժ 4%:




Խոշոր պումպակայանների էլեկտրաէներգիայի խափանումներ

● Հաշվետու ժամանակահատվածում 25 խոշոր պումպակայաններում էլ. մատակարարման խափանումներն օպերատիվ կերպով շտկվել են, իսկ առաջացած թերությունները՝ հայտնաբերվել և վերացվել:

Երևան քաղաքի՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան

● 2023թ. մայիս ամսին Երևան քաղաքի ջրարտադրության պումպակայաններում էլ. էներգիայի ծախսն ավելացել է 778 751 կՎտ/ժամ (50,15%)՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

Երևան քաղաքի ջրարտադրության պումպակայանների սպառած էլեկտրաէներգիա



● Ջրարտադրության պումպակայաններում (մարզեր) էլ. էներգիայի ծախսն ավելացել է 137920 ԿՎտ/ժ/ամիս կամ 7.41%՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:


Մարզերի ջրարտադրության պումպակայանների սպառած էլեկտրաէներգիա



«Վեոլիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլ. էներգիան

● Ընդհանուր էլեկտրաէներգիայի ծախսն ավելացել է 975094 ԿՎտ/ժամ 21,36 %՝ անցյալ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ:

«Վեոյիա Ջուր» ՓԲԸ կողմից սպառած էլեկտրաէներգիան



3.3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Ստորև աղյուսակում ներկայացնում են ապրիլ ամսվա ընթացքում աշխարհագրական տեղեկատվական համակարգում կատարված աշխատանքները.

Աշխատանքի անվանում	Չ/Մ	Քանակ
«Մաշտոց» տեղամասի Դավթաշեն 2-րդ թաղամասի ջրագծերի ուղղում	թաղամաս	1
Երևան քաղաքի ջրամատակարարման գոտիների ուղղումներ և թարմացումներ	քաղաք	1
«Գոտիավորման վարչություն» կողմից տրված տեղեկատվության հիման վրա Երևան քաղաքի ջրամատակարարման գոտիների ուղղումներ և թարմացումներ	գոտի	111
«Գոտիավորման վարչություն» կողմից տրված տեղեկատվության հիման վրա Լուկաշին թաղամասի ներտնային միացումների մուտքագրում ԱՏՀ	միացում	257
Ստեփանավան, Ալավերդի, Ախթալա քաղաքների հիդրավիլի մոդելավորում	քաղաք	3
Արարատի մարզի Նոր Խարբերդ, Հայանիստ, Դիտակ, Ջրաշեն, Ջորակ, Խաչփար, Բարձրաշեն, Նոր Կյուրին համայնքների ջրի բաշխիչ համակարգերի հիդրավիլի մոդելավորման համար ջրագծերի թարմացում և մոդելի կառուցում	համայնք	8
256 տեխնիկական պայմանների, 15 սխեմաների թվայնացում (390 բաժանորդ)	տեխպայման	256
Սյունիքի մարզի Գորիս քաղաքի տարածքով անցնող կոյուղագծերի վերակառուցման տվյալների մուտքագրում ԱՏՀ	քաղաք	1
Կառուցված ջրագծերի երկարություն	մետր	412
«Ինտերակտիվ» համակարգում բաժանորդ կետերի ուղղում	կետ	1021
«Ինտերակտիվ» համակարգում իրավաբանական նոր կետերի ավելացում	կետ	81
«Ինտերակտիվ» համակարգում ֆիզիկական նոր կետերի ավելացում	կետ	842
Տեղադրված կամ փոխարինված փականներ	փական	37
ԱՏՀ-ում Երևան քաղաքի ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	2590
ԱՏՀ-ում Մարզային ջրագծերի և ջրատարների երկարությունը	կմ	9425
ԱՏՀ-ում առկա Երևան քաղաքի ընդհանուր կոյուղու երկարությունը	կմ	1797
ԱՏՀ-ում մարզերի կոյուղու երկարությունը	կմ	1818

3.4. ՋՐԱՏԱՐ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

Ստորև ներկայացնում ենք մայիս ամսվա ընթացքում հայտնաբերված վթարների և կատարված աշխատանքների համառոտ բնութագիրը.

● Արարատյան ջրատարի վրա՝ Նորագավիթում, խափանվել էր d=200մմ ջրթող փականը, որի հետևանքով ունեցանք 25 լ/վ ջրակորուստ: Կազմակերպվեցին փականի փոխարինման աշխատանքներ և հոսակորուստը վերացվեց: Հարևանությամբ վթարվել էր անհայտ միացում 3լ/վ մեծությամբ, որն էլ խցափակվեց:




- Գառնի-Երևան ջրատարի շրջայցի ժամանակ «Արին-Բերդ» ՕԿՁ-ի միջակայքում հայտնաբերվել է վթար 3լ/վ մեծությամբ, որի մասին տեղամասին տեղեկացվել է: Վթարը վերացվել է:
- Կատարվել են Երևան քաղաքի տեղամասերի ջրաքանակների բաշխման աշխատանքներ, ինչպես նաև այցելություններ մարզեր՝ ուսումնասիրություններ կատարելու նպատակով:



Գոտիավորման աշխատանքներ

Քաղաք Գյումրի

- «Շիրակ» տեղամասի կողմից՝ Անի թաղամասում, վարկային ծրագրով անցկացված նոր ջրամատակարարման ցանցը սնուցող $D = 310$ մմ ՊԷ ջրագիծը $D=600$ մմ ջրագծին միացնելուն զուգընթաց ՇՏ կողմից տեղադրվեց նոր $D=200$ մմ էլեկտրամագնիսական հոսքաչափ, ինչը թույլ է տալիս այսուհետ վերահսկել թաղամաս մուտք գործող ջրաքանակը:



- «Շիրակ» տեղամասի կողմից Օղակային $D-600$ մմ ջրատարից սնվող Արցախի $D-250$ մմ ջրագծի վրա տեղադրվեց $D-80$ մմ ՃԿՓ, որը թույլ կտա խուսափել ցանցում առկա բարձր ճնշումներից, խուսափել վթարներից և ապահովել կայուն ջրամատակարարում: Արդյունքում՝ նախկինում առկա $Q=13$ լ/վ ջրաքանակը ՃԿՓ-ն տեղադրելուց հետո դարձավ $Q = 8$ լ/վ, տնտեսվեց 5 լ/վ ջրաքանակ:



Քաղաք Ալավերդի

- Թեկերյան փողոցում իրականացված վթարորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց թվով 7 գաղտնի վթար $D=100$ մմ ջրագծի վրա: Վթարները վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 6$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Քաղսի

- Քաղսի գյուղում իրականացված վթարորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար դպրոցի հարևանությամբ անցնող 75 մմ պե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 0,5$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Եղվարդ

● Եղվարդ քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել են վթարներ «Համակցված կերեր»-ի ջրագծի, Երևանյան փողոցում և այլն: Վթարները վերացնելուց հետո տնտեսվել է մոտ $Q = 12$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Միսիան

● Միսիան քաղաքում իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Սպանդարյան փողոց 75 տան դիմացով անցնող $D = 160$ մ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 4$ լ/վ ջրաքանակ:



Քաղաք Երևան

● «Մաշտոց» ՇՏ աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել է վթար Հալաբյան փողոցում «SAS Food Court»-ի մոտով անցնող $D = 800$ մ ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 10$ լ/վ ջրաքանակ:



● «Էրբերունի» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Էրբերունի փողոց 34 շենքի $D = 50$ մ պողպատե մուտքագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 2$ լ/վ ջրաքանակ:

● «Արաբկիր» տեղամասի աշխատակիցների հետ իրականացված վթարաորոնողական աշխատանքների արդյունքում հայտնաբերվեց գաղտնի վթար Ադոնց 15 շենքի նկուղում, Ադոնց 13 հասցեի պ/կ մոդոլ, $D = 50$ մ պողպատե ջրագծի վրա: Վթարը վերացնելուց հետո տնտեսվեց $Q = 2$ լ/վ ջրաքանակ:



3.5 ՔԼՈՐԻ ԵՎ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Մայիս ամսվա ընթացքում Քլորի և խմելու ջրի մաքրման կայանների ծառայության կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքները.

● Քաղաք Չարենցավանի «Արգել» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի աշխատանքն ապահովելու նպատակով հեղուկ քլորի համակարգի արդեն հնամաշ քլորագծերը ապամոնտաժվել և մոնտաժվել են, հեղուկ քլորի դրզատորի 500գ/ժ կուլբան փոխարինվել է 250գ/ժ կուլբայով քլորի դրզան ճիշտ կարգավորելու համար:



● Քաղաք Եղեգնաձորի «Գետափ» քլորակայանում հեղուկ քլորի տրման սարքավորումները (վակուում կարգավորիչ, Aldos փական) ապամոնտաժվել են, և տեղադրվել են կոնսերվացված «Ոստան» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

● Քաղաք Իջևանի «Գետափնյա» քլորակայանում հիպոքլորիդի համակարգի դրզավորման պոմպի շարքից դուրս եկած հենակը փախարինվել է նոր հենակով, որով հնարավոր կլինի ֆիքսել հիպոքլորիդի համակարգի դրզավորման պոմպը:



● Քաղաք Մարտունի «Հոպոյի վար» քլորակայանում հեղուկ քլորի համակարգի ինժեկտորի խցանումը մաքրվել է, ինչն էլ ապահովել է հեղուկ քլորի համակարգի անխափան աշխատանքը:

● Քաղաք Եղեգնաձորի «Ոստան» քլորակայանում հեղուկ քլորի սարքավորումները մոնտաժվել են, կառուցվել են շարքից դուրս եկած քլորագծերը հեղուկ քլորով աշխատող կոնսերվացված քլորակայանի վերագործարկման նպատակով:



3.6 1-85 ԹԵԺ ԳԻԾ

- Հաշվետու ամսվա ընթացքում 1-85 հեռախոսակենտրոնում գրանցվել է 46380 զանգ:
- Առևտրային բնույթի զանգերի քանակը կազմել է 12825 զանգ, որից Երևան քաղաքինը եղել է 9688 զանգ (75,5%), իսկ մարզերի ցուցանիշը՝ 3137 զանգ (24,5%):
- Շահագործման վերաբերյալ ստացվել է 33555 զանգ, որից Երևան քաղաքինը՝ 26656 զանգ (79,4%), իսկ մարզերինը՝ 6899 զանգ 20,6(%):

185 հեռախոսային կանչերի օրական հաշվառման հաշվեկիր

	Ստորաբաժանում	2022 Մայիս	2023 Մայիս	
Առևտրային	Ընդամենը	12258	12825	4.63%
	Երևան	9647	9688	0.43%
	Մարզեր	2611	3137	20.15%
Շահագործում	Շահագործում	27546	33555	21.81%
	Երևան	20428	26656	30.49%
	Արաբկիր	6502	6147	-5.46%
	Քանաքեռ-Զեյթուն	1464	2172	48.36%
	Մաշտոց	3086	3422	10.89%
	Շահումյան	2111	3449	63.38%
	Շենգավիթ	1661	2686	61.71%
	Կենտրոն	2448	4440	81.37%
	Հյուսիս/Ավան Նոր Նորք/	1547	2214	43.12%
	Էրեբունի	1609	2126	32.13%
	այդ թվում կոյուղու վթար	129	218	68.99%
	այդ թվում դիտահորի խցանում	4293	4690	9.25%
	ՄԱՐԶԵՐ	7118	6899	-3.08%
	Հարավ	3738	3475	-7.04%
	Հյուսիս	3380	3424	1.30%
	այդ թվում կոյուղու վթար	56	42	-25.00%
	այդ թվում դիտահորի խցանում	2696	2452	-9.05%
Ընդամենը	39804	46380	16.52%	

- 2022թ. մայիս ամսվա համեմատ՝ 2023թ. մայիս ամսին 4,63%-ով ավելացել է առևտրային զանգերի քանակը, իսկ շահագործման զանգերի քանակը ավելացել է 21,81%-ով:
- 2022թ. մայիսի համեմատ՝ 2023թ. մայիս ամսին 46%-ով ավելացել է ֆիքսված զանգերի քանակը, 48 %-ով ավելացել է 5 րոպեից ավել զանգերի քանակն և 65 %-ով ավելացել է հայտարարությունների լսումն ավտոմատ ծառայության միջոցով:
- 2022թ. մայիսի համեմատ՝ 2023թ. մայիս ամսին 29,36%-ով ավելացել են ջրամատակարարման բողոքները:



ԼՐԱՏՎԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



Հաշվետու՝ մայիս ամիսը Վեոլիա ջուր ընկերության համար բուռն աշխատանքային ժամանակաշրջան էր թե ջրագծերի և կոյուղագծերի վերակառուցման, թե վթարների վերացման և ընթացիկ այլ աշխատանքների համար: Դրանից ելնելով՝ Հանրային կապերի ծառայությունն ապահովել է 38 հրապարակում:



Ամսվա թերևս գլխավոր և ամենակարևոր իրադարձությունը Վեոլիա Ջուր ՓԲԸ Վարձակալության պայմանագրի 6-րդ տարվա տարեկան հաշվետվության շնորհանդեսն էր, որը Հանրային կապերի ծառայությունը լուսաբանել է թե ընկերության ֆեյսբուքյան և պաշտոնական կայքէջերում, թե մամուլի հաղորդագրություն ուղարկելով 60-ից ավելի լրատվամիջոցների:



Ներկայացնելով ընկերության տարեկան հաշվետվությունը՝ մամուլի հաղորդագրությունում նշվել է, որ վարձակալության պայմանագրի 6-րդ տարում Վեոլիայի Թիմը ոչ միայն ապահովել է, այլև գերազանցել է պայմանագրով սահմանված նպատակակետերը. շարունակաբար բարելավվել է ջրամատակարարումը ոչ միայն Երևանում, այլ նաև հանրապետության մյուս քաղաքներում և գյուղական համայնքներում, մեծ ուշադրություն է դարձվել ջրի որակի շարունակական բարելավմանը, արդիականացվել է շահագործվող ինժեներական կառույցները, կատարվել են այլ կարևոր աշխատանքներ ևս, որոնց շնորհիվ ընկերությունը հպարտորեն արձանագրել իր հաջողությունները: Վարձակալության պայմանագրի 6-րդ տարում ընկերությունը ձեռնամուխ է եղել մարզերի վատթար վիճակում գտնվող բնակավայրերի ջրամատակարարման խնդիրների լուծմանը՝ միաժամանակ բարելավելով և պահպանելով քաղաքներում առկա դրական ձեռքբերումները: 2022 թվականին ջրառը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 7,136 հազ. մ3-ով, այն պարագայում, երբ ջրամատակարարման միջին տևողությունը Երևան քաղաքում կազմել է 23.19 ժամ, իսկ գյուղական բնակավայրերում՝ 20.22 ժամ: Այդ ընթացքում շահագործվել են 125 ջրաղբյուրներ, 54 գլխամասային պոմպակայաններ, 91 քլորակայաններ և 12 քլորացման կետեր:



Առանձնացնելով մայիս ամսվա ընթացքում կարևոր աշխատանքներից ևս մեկը, Հանրային կապերի ծառայությունը լուսաբանել է «Գյումուշ» աղբյուրների սանիտարական գոտում 5 կապտաժների (ջրահավաք) կառուցման աշխատանքները: Կառուցվել է նաև 205 գծամետր երկարությամբ նոր խողովակաշար, որը կապտաժներում հավաքված ջուրը ինքնահոս եղանակով ուղղելու է դեպի «Արզական-Երևան» ջրատար: Իսկ դա նշանակում է, որ ջրատարով մայրաքաղաք հոսող ջրաքանակը ավելացել է վայրկյանում 25 լիտրով:

Արդյունքում ջրի քանակի ավելացմամբ հնարավոր կլինի լիարժեք բավարարել Երևանի Արաբկիր, Աջափնյակ և Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների ջրի պահանջարկը: Երևան և Բերդ քաղաքներում ակտիվորեն շարունակվել ենի Օրվա կարգավորիչ ջրամբարների լվացման, մաքրման և ախտահանման աշխատանքները էլ ավելի որակյալ ջուր մղելով նշված բնակավայրեր: Մայիս ամսին շատ էին հրապարակումները ջրագծերի վերակառուցումների մասին: Մասնավորապես, Վեոլի քաղաքի Արտակ Խաչատրյան փողոցը մինչև այսօր չի ունեցել գլխավոր ջրագիծ: Փողոցի 30 բաժանորդ ջուր ստանում էր հարևան փողոցից: Ընկերությունը կառուցելով 1200 գծամետր նոր ջրագիծ՝ լուծեց տարիների խնդիրը: Իսկ Էջմիածնի Մաշտոցի և Կոստանյան փողոցներում կառուցված 900 գծամետր ջրագծի շահագործումից հետո, Մաշտոցի 7 շենքեր ունեն շուրջօրյա ջրամատակարարում, ընդ որում 5-րդ հարկերում ինքնահոս եղանակով ապահովվում է 0,8 մթն ճնշում: Նման ցուցանիշ էջմիածնի այս հասցեներում երբևէ չի եղել: Դա թույլ է տվել շահագործումից հանել 30 ԿՎՏ հզորությամբ հին պոմպեր: Նոր ջրագծեր կառուցվեցին նաև Զարենցավանում,

Դիլիջանում, Եղվարդում, Ալավերդիում, Նոր Խարբերդում, Քասախում, Շատինում և այլ բնակավայրերում:

Հաշվետու ամիսը աննախադեպ էր կոյուղագծերի վերանորոգումների, վերակառուցումների և խցնումները վերացնելու առումով: Նոր պոլիէթիլեն խողովակաշարով փոխարինվեց Տավուշի մարզի Բերդ քաղաքի Խորենացի փողոցի 70-ական թվականներին կառուցված կոյուղատար համակարգը: 480 գծամետր կոյուղագիծ կառուցելով Վեոլիաթիմը ապահովեց փողոցի կոյուղաբերի անարգել հեռացումը: Կոյուղատար համակարգի արդիականացման աշխատանքներ իրականացվեցին նաև Հրազդանում, Դիլիջանում, Երևանում և այլ քաղաքներում:



Մայիս ամսին լուծվեց տարիների պատմություն ունեցող ևս մեկ կոյուղու խնդիր: Երևանի Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանի Կուրդինյան փողոցի 800 մ-

ոց կոյուղատարը հնարավոր չէր մաքրել և շահագործել դրա վրա կառուցված ապօրինի շինությունների պատճառով, ինչի հետևանքով էլ կոյուղաջրերը լցվում էին Կուրդինյան 11 և հարակից շենքերի նկուղներ: Քաղաքապետարանի թույլտվությունը ստանալուն պես, Վեոլիաթիմը սկսեց քանդման աշխատանքներ, որը տևեց մեկ շաբաթ: Ի վերջո գտնվեց կոյուղու վթարված հատվածը, որը փոխարինվեց:

Բավականին բարդ ընթացքն Հաղարծին գյուղում Դիլիջան քաղաքի 1000 մ-ոց կոյուղու կոլեկտորի մաքրման աշխատանքները: 3 օր պահանջվեց Վեոլիաթիմից ձեռքով և «փչող-մաքրող» մեքենաներով Դիլիջանի համար այս կարևոր կոլեկտորի խցանումը բացելու համար:

Հրապարակումներ եղան նաև ջրագծերի վթարների վերացման աշխատանքներից: Լուսաբանվեց «Գառնի-Երևան», «Նուռնուս-Արզնի» ջրատարների վթարավերացման աշխատանքները, Գավառում, Սևանում, Հրազդանում, Վարդենիսում և հանրապետության այլ բնակավայրերում ջրագծերի վերանորոգման աշխատանքները, որոնց արդյունքում հնարավոր եղավ խնայել զգալի քանակությամբ ջուր:

Քիչ չէին հրապարակումները նաև ինժեներական կառույցների վերանորոգման աշխատանքների մասին: «Բերդ» Ջրի մաքրման կայանի (ՋՄԿ) 4 պարզարաններից մեկի աշխատանքը ճաքերի պատճառով ձմռանից դադարեցված էր: Պարզարանի երկաթբետոնե կոնստրուկցիաների վերանորոգման աշխատանքներից հետո այժմ ՋՄԿ-ն գործում է ամբողջ հզորությամբ: Շրջանցող խողովակաշարով փոխարինվեց նաև «Բերդ» ջրի մաքրման կայանից դեպի Տավուշ գետ գնացող ջրթափը, որը կառուցված լինելով 1970-ական թվականներին, արդեն քայքայվել էր և դարձել վթարային:

Հաշվետու ամսում հավուր պատշաճի հիշվել են տոնական օրերը, հրապարակումներ են եղել ընկերության կարիքների համար պահանջվող ծառայությունների կամ ապրանքների մատակարարման մասին:

Հրապարակումների մի մասը ուղարկվել է նաև հանրապետության առաջատար մոտ 60 լրատվամիջոցների: Իսկ երբեմն էլ դրանք, Հնկերության ֆեյսբուքյան էջից բացի տեղադրվել են Veolia.am պաշտոնական կայքում, ինչպես նաև ընկերության Թվիթերյան և ՅուԹյուբյան էջերում:

*ՈՐԱԿԻ, ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ*

5.1. ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ/ՄԵՄԻՆԱՐՆԵՐ

● ՈԱԱ Բաժինը (ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ), ղեկավարվելով Ընկերության Գլխավոր տնօրենի 2022 թվականի հունվարի 24-ի թիվ 02Լ, հրամանի և հրամանին կից կարգի պահանջներով, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 88-րդ հոդվածի և 254-րդ հոդվածի պահանջներով, Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջներով, Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 7 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը.

- «1000կգ և ավել բեռնաբարձությամբ ավտոկրանների վարորդների որակավորման»,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց,
- Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները»:




● ՈԱԱ Բաժինը, հիմք ընդունելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի, ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 247-րդ հոդվածի, ինչպես նաև ՀՀ կառավարության 21/04/2011 թվականի N 529-Ն որոշմամբ սահմանված «Քլորի արտադրության, օգտագործման, պահման և փոխադրման ժամանակ անվտանգության տեխնիկական կանոնակարգի» պահանջները, ինչպես նաև Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» բարձր ռիսկերի կառավարման ստանդարտի և «Կյանքը փրկող կանոններ»-ի (LRS) պահանջները Ընկերության Տեխնիկական տնօրինության թվով 78 աշխատողի համար կազմակերպեց և իրականացրեց ստորև ներկայացվող 4 մոդուլից բաղկացած առկա դասընթացները և գիտելիքների ստուգումը


- «Քլորակայաններ շահագործող, սպասարկող անձնակազմի մասնագիտական որակավորում»,
- «Առաջին օգնություն ցուցաբերելու եղանակները» թեմայով դասընթաց,
- Վեոլիա Գրուպի «Երթևեկությունը աշխատավայրում» ԲՌԿ ստանդարտի պահանջները,
- Վեոլիա Գրուպի «Կյանքը փրկող կանոնները»:



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումներին մասնակցած աշխատակիցների քանակների համեմատական գրաֆիկ



2022-2023թթ. կազմակերպված դասընթացներին/հրահանգավորումների ժամային համեմատական գրաֆիկ




5.2 ՌԻՍԿԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ/ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄ

- Բաժնի անվտանգության պատասխանատուներն իրականացրեցին անվտանգության ստուգայցեր Ընկերության թվով 1 վարչական շենքում, 19 պոմպակայանում և 8 քլորակայանում: Ստուգայցերի նպատակն էր իրականացնել ռիսկերի գնահատում և կառուցվածքները շահագործող անձնակազմերի կողմից Ընկերությունում հաստատված անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակի մոնիթորինգ:
- ՈԱԱ Բաժնի կողմից ուսումնասիրվել են Ընկերության ջրամատակարարման և ջրահեռացման

ցանցերում իրականացվող թվով 19 վթարավերականգնողական աշխատանքների ընթացքում տեղամասերի վթարավերականգնողական աշխատանքային խմբերի կողմից անվտանգության հրահանգների պահանջների կատարման որակը, տեղում տրվել են ցուցումներ անվտանգության գործընթացի արդյունավետ կազմակերպման մասնավորապես ԱՊՄ-ների կիրառման, մշակվող խրամուղիների պարագծով գծանշման, ծանր տեխնիկայի շահագործման ուղղությամբ, ինչպես նաև արձանագրված թերությունների վերաբերյալ կազմվեցին հաշվետվություններ և ներկայացվեցին Ընկերության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին արձանագրված թերությունների շտկման նպատակով:

2023 թ. իրականացված անվտանգության ստուգայցների քանակներն ըստ օբյեկտների



5.3 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՅՈՒԹՅՈՒՆ ՀՀ ՆԳ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ

● Համաձայն ՀՀ Շիրակի մարզպետի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2023 թվականի հիմնական միջոցառումների պլանի և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի, 2023թ-ի մայիսի 25-ին, Ընկերության «Հյուսիս» Շահագործման տնօրինության «Շիրակ» շահագործման տեղամասը՝ ՈԱԱ բաժնի համակարգմամբ, մասնակցեց Ուժեղ երկրաշարժի դեպքում «Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպումը» թեմայով Հրամանատարաշտաբային ուսուսման արժանապատիվին, որից հետո պատրաստվեց համապատասխան զեկույց և ներկայացվեց Շիրակի մարզպետին (Ուսուսման արժանապատիվի ղեկավարին):



«ՎԵՈՒԼԻԱ ԶՈՒՐ» ՓԲԸ
ՀՀ, 0014, ք.երևան, Ն.Ադոնցի 6/1
ՀՀ, 0025, ք.երևան, Աբովյան 66ա
E-mail: info@vjur.am